ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

23 դեկտեմբերի, 2021 թվականի № 68-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 10-րդ կետերը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ և 25-րդ կետերը և հաշվի առնելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության 2022 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
2. Հաստատել Ընկերության 2022 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

23 դեկտեմբեր, 2021 թվականի

ք. Երևան